ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 նոյեմբերի 2024 թ. N 293-Ա

«ՀԷՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՅՐԱՑ N 3 ՇԵՆՔԻ ԹԻՎ 3 ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով, 98-րդ կետի 2-րդ պարբերությամբ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի N 98-Ն որոշման, հաշվի առնելով «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից լիազորված կազմակերպության դիմումը (մտից՝ 2024 թվականի հունիսի 3-ի N 920) և Լիազոր մարմնի համաձայնությունը (մտից N 1659, 21.10.2024 թ.) ***որոշում եմ՝***

1. «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը՝ ի դեմս «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի, տալ շինարարության թույլտվություն «Արևաձուկ» ՍՊ ընկերության պատկանող՝ Ջերմուկ համայնքի Մայրաց N 3 շենքի թիվ 3 հասցեում գտնվող շինությունների ԿՏԵ–ի 10 կՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:

2. «ՀԷՑ» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 3000 (երեք հազար) դրամ տեղական տուրք՝ որպես շենքերի և շինությունների արդիականացման համար նախատեսված տուրք:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկի կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպութ– յանը, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ Ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կապալառու և լիազորված «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. նոյեմբերի 4
Ջեռմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 նոյեմբերի 2024 թ. N 294-Ա

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱԶՆԻՎ ՎԱՀԱՆԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ ենթակետով, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի բնակիչ Հ. Է. Մկրտչյանի դիմումը՝ ***որոշում եմ***՝

1. Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 5-րդ գլխի պահանջները՝ Ջերմուկ համայնքի բնակիչ Ազնիվ Վահանի Առաքելյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ Գնդեվազ համայնքի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 10.04.1991 թ. N 7 որոշում) Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի 3-րդ փողոցի վրա գտնվող անշարժ գույքին՝ 0,39088 հա մակերեսով բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 3-րդ փողոցի N 8:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2024 թ. նոյեմբերի 5
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 նոյեմբերի 2024 թ. N 295-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՆԴԵՎԱԶ ԳՅՈՒՂԻ ՄԱՅՐԱՑ ՓՈՂՈՑԻ N 3/2/1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՌԿԱ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ և 36-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետերով, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Զ. Հակոբյանի դիմումը (մտից 1741, 30.10.2024 թ.)՝ ***որոշում եմ***՝

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի Մայրաց փողոցի N 3/2/1 հասցեում գտնվող, Ջերմուկ քաղաքի բնակիչ Զարմիկ Հակոբյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասը, ըստ համայնքապետարանի աշխատակազմի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի, կառուցապատելու նպատակով թույլատրել իրականացնելու հողամասում առկա ծառերի հատում:

2. Հատման հետևանքով առաջացած փայտանյութը թույլատրել Գնդեվազ գյուղից տեղափոխելու քաղաք Ջերմուկ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆ

2024 թ. նոյեմբերի 6
Ջերմուկ